ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունվարի 2020 թվական թիվ 7-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 18-րդ և 20-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի թիվ 737-Ն որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2020 թվականի հաստիքացուցակը և դրույքաչափերը համաձայն հավելվածի:
2. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2019թ. հունվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի 2019 թվականի հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2018թ. հունվարի 23-ի թիվ 9-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 4-Ա որոշումը:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

15.01.2020

X

2020թ.հունվարի 15
ք.Իջևան